ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

6 ապրիլի 2016 թվականի **թիվ 24** քաղ. Աստանա

Մաքսային միության հանձնաժողովի որոշ որոշումներում փոփոխություններ կատարելու եւ Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման երրորդ գծի կառուցման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների ցանկը հաստատելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 43-րդ եւ 45-րդ հոդվածներին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 7-րդ եւ 16-րդ կետերին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության մաքսային միության միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» Մաքսային միության հանձնաժողովի՝ 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 130 որոշման 7-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7.1.24 ենթակետով.

«7.1.24. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի ապրիլի 6-ի թիվ 24 որոշմամբ հաստատված՝ Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման երրորդ գծի կառուցման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների ցանկի համաձայն Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման երրորդ գծի կառուցման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքները։

Նշված արտոնությունը տրամադրվում է ներմուծվող ապրանքների նպատակային նշանակության հաստատումը Հայաստանի Հանրապետության մաքսային մարմին ներկայացնելու պայմանով, որը տրվել է Հայաստանի Հանրապետության լիազորված պետական մարմնի կողմից եւ պարունակում է այդ ապրանքների անվանացանկի, քանակի, արժեքի մասին, ինչպես նաեւ դրանց ներմուծումն իրականացնող կազմակերպությունների մասին տեղեկություններ։»։

2. Մաքսային միության միասնական մաքսային տարածք ապրանքների առանձին կատեգորիաների ներմուծման դեպքում Մաքսային միության 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ 728 որոշմամբ հաստատված՝ մաքսատուրքերի վճարումից ազատման կարգի 15-րդ կետում «7.1.23» թվերը փոխարինել «7.1.24» թվերով։

3. Հաստատել Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման երրորդ գծի կառուցման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների՝ կից ներկայացվող ցանկը։

4. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Բ. Սագինտաեւ	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի
ապրիլի 6-ի թիվ 24 որոշմամբ

ՑԱՆԿ

Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման երրորդ գծի կառուցման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծող ապրանքների

Ծածկագիրը ԱՏԳ ԱԱ	Դիրքի անվանումը
7308	Մետաղակոնստրուկցիաներ՝ սեւ մետաղներից (բացի 9406 ապրանքային դիրքի հավաքովի շինարարական կոնստրուկցիաներից), եւ դրանց մասերը (օրինակ՝ կամուրջներ եւ դրանց սեկցիաները, ջրարգելակների դարպասներ, աշտարակներ, վանդակավոր կայմեր, ծածկեր՝ տանիքների համար, շինարարական ֆերմաներ, դռներ եւ պատուհաններ ու դրանց շրջանակները, դռան շեմքեր, շերտափեղկեր, ճաղաշարքեր, հենարաններ եւ դրանց հենասյունները). մետաղակոնստրուկցիաների մեջ օգտագործման համար նախատեսված թիթեղաթերթեր, ձողեր, անկյունակներ, ձեւավոր տրամատներ (պրոֆիլներ), խողովակներ եւ նույնանման արտադրատեսակներ՝ սեւ մետաղներից
7312	Ոլորված մետաղալար, մետաղաճոպաններ, մետաղապարաններ, հյուսված քուղեր, առասաններ եւ նույնանման արտադրատեսակներ՝ սեւ մետաղներից՝ առանց էլեկտրական մեկուսացման

7326	Այլ արտադրատեսակներ՝ սեւ մետաղներից
7408	Պղնձալար
7608	Ալյումինե խողովակներ եւ փողակներ
7614	Ոլորված մետաղալարեր, մետաղաճոպաններ, հյուսված քուղեր եւ ալյումինե նույնանման արտադրատեսակներ՝ առանց էլեկտրական մեկուսացման
8414	Պոմպեր՝ օդային կամ վակուումային, օդային կամ գազային կոմպրեսորներ եւ օդափոխիչներ. օդափոխիչ կամ վերաշրջանառու օդաքաշ թասակներ կամ պահարաններ՝ օդափոխիչներով, ֆիլտրերով կամ առանց ֆիլտրերի
8471	Հաշվողական մեքենաներ եւ դրանց բլոկները. մագնիսական կամ օպտիկական հաշվարկման սարքեր, մեքենաներ՝ տեղեկատվության տվյալները կրիչների վրա ծածկագրված ձեւով փոխադրելու համար, եւ մեքենաներ՝ նման տեղեկատվությունը մշակելու համար, այլ տեղում չնշված կամ չընդգրկված
8504	Տրանսֆորմատորներ էլեկտրական, ստատիկ էլեկտրական կերպափոխիչներ (օրինակ՝ ուղղիչներ), ինդուկտիվության կոճեր եւ դրոսելներ
8517	Հեռախոսային ապարատներ, ներառյալ՝ հեռախոսային ապարատները բջջային կապի ցանցերի կամ այլ՝ առանց հաղորդալարի կապի ցանցերի համար. այլ ապարատուրա՝ ձայնի, պատկերի կամ այլ տվյալների հաղորդման կամ ընդունման համար, ներառյալ՝ հաղորդալարային կամ առանց հաղորդալարի ցանցում (օրինակ՝ կապի լոկալ կամ գլոբալ ցանցում) հաղորդակցման համար ապարատուրան՝ բացառությամբ 8443, 8525, 8527 կամ 8528 ապրանքային դիրքերում գտնվող հաղորդող կամ ընդունող ապարատուրայի

8531 Էլեկտրասարքավորումներ՝ ձայնային կամ տեսողական ազդանշանային (օրինակ՝ զանգեր, շչակներ, ինդիկատորային վահանակներ, պահպանության ազդանշանային սարքվածքներ կամ հրդեհի ազդանշանային սարքվածքներ)՝ բացի 8512 կամ 8530 ապրանքային դիրքերում ընդգրկված սարքավորումներից

8535 Էլեկտրական ապարատուրա՝ կոմուտացիայի կամ էլեկտրական շղթաների պահպանման համար կամ էլեկտրական շղթաներին կամ էլեկտրական շղթաներում միացնելու համար (օրինակ՝ անջատիչներ, փոխարկիչներ, ընդհատիչներ, հալուն ապահովիչներ, շանթարգելներ, լարման սահմանափակիչներ, լարման ցատկերի մարիչներ, հոսանքընդունիչներ, հոսանքահաններ եւ այլ միակցիչներ, միակցման տուփեր) 1000 Վ-ից ավելի լարման դեպքում

8536 Էլեկտրական ապարատուրա՝ կոմուտացիայի կամ էլեկտրական շղթաների պահպանման համար կամ էլեկտրական շղթաներին կամ էլեկտրական շղթաներում միացնելու համար (օրինակ՝ անջատիչներ, փոխարկիչներ, ընդհատիչներ, ռելե, հալուն ապահովիչներ, լարման թռիչքների մարիչներ, խրոցակների եղանիկներ եւ վարդակներ, էլեկտրական լամպերի կոթառներ եւ այլ միակցիչներ, միակցման տուփեր) 1000 Վ-ից ոչ ավելի լարման դեպքում. Միակցիչներ՝ օպտիկական մանրաթելերի, թելքաօպտիկական լարանների կամ մալուխների համար

8537 Պուլտեր, վահանակներ, բարձակներ, սեղաններ, բաշխիչ վահաններ եւ այլ հիմքեր՝ էլեկտրական ապարատուրայի համար՝ սարքավորված 8535 կամ 8536 ապրանքային դիրքում ընդգրկված երկու կամ ավելի սարքվածքներով՝ էլեկտրական հոսանքի ղեկավարման կամ բաշխման համար, այդ թվում՝ իրենց մեջ 90-րդ խմբի սարքերը կամ սարքվածքները եւ թվային ղեկավարման ապարատներն ընդգրկող՝ բացի 8517 ապրանքային դիրքի կոմուտացիոն սարքվածքներից

8544 Հաղորդալարեր մեկուսացված (ներառյալ՝ արծնապատները կամ անոդավորվածները), մալուխներ (ներառյալ՝ համառանցքային մալուխները) եւ այլ մեկուսացված էլեկտրական հաղորդիչներ՝ միացնող հարմարանքներով կամ առանց դրանց. մալուխներ թելքաօպտիկական՝ անհատական կորպուսներով մանրաթելից կազմված՝ անկախ նրանից՝ դրանք հավաքված են էլեկտրահաղորդիչների կամ միացնող հարմարանքների հետ, թե՝ ոչ

8546 Էլեկտրական մեկուսիչներ՝ ցանկացած նյութից

9030 Օսցիլոսկոպներ, սպեկտրաանալիզատորներ, այլ սարքեր եւ ապարատուրա՝ էլեկտրական մեծությունների չափման կամ հսկման համար՝ բացի 9028 ապրանքային դիրքում նշված չափիչ սարքերից. սարքեր եւ ապարատուրա՝ ալֆա, բետա, գամմա, ռենտգենյան, տիեզերական կամ այլ իոնացնող ճառագայթումները հայտնաբերելու կամ չափելու համար

9405 Լամպեր եւ լուսավորման սարքավորումներ, ներառյալ՝ լուսարձակները, լամպեր՝ լույսի նեղ ուղղվածությամբ, ցոլալապտերներ եւ դրանց մասերը՝ այլ տեղում չնշված կամ չներառված. լուսային ցուցանակներ, լուսային ցուցատախտակներ՝ անունով կամ անվանումով կամ հասցեով, եւ նույնանման արտադրատեսակներ՝ ներկառուցված լույսի աղբյուր ունեցող, եւ դրանց մասերը՝ այլ տեղում չնշված կամ չներառված